իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերը, հետևաբար նման պայմաններում և վերոշարադրյալ պատճառաբանությամբ, Դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է մերժման:

<u>Դատական ծախսերը.</u>

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին՝ Դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով, որ Հայցվորի կողմից նախապես վճարվել է օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը, Դատարանը գտնում է, որ հայցի մերժման պայմաններում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

<u>Հայցի ապահովման միջոցների վերաբերյալ.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայցը ենթակա է մերժման, ուստի վերոգրյալ իրավակարգավորման համաձայն Դատարանի 23.02.2024 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը՝ ՀՀ Վիճակագրական կոմիտեին և «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲ ընկերությանը որևէ գործողություն կատարելն արգելելը՝ ուղղված թիվ «ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ընկերության կողմից ներկայացված թիվ O.AB.100.12CIB.PIED.0.660.24 բանկային երաշխիքով ստանձնած պարտավորությունների կատարմանը՝ մինչև վերջնական եզրափակիչ դատական ակտի կայացումը, պետք է պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Բիլդինգ Կապիտալ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ Վիճակագրական կոմիտեի կողմից իր կարիքների համար համակարգչային պլանշետների ձեռքբերման նպատակով 28.12.2023 թվականի թիվ 1 որոշմամբ հայտարարված թիվ «ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.01.2024 թվականին կազմված թիվ 2 արձանագրությամբ՝

«Բիլդինգ Կապիտալ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ թիվ «ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, ՀՀ վիճակագրական կոմիտեի թիվ «ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Բիլդինգ Կապիտալ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելուն պարտավորեցնելու պահանջների մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Դատարանի 23.02.2024 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը՝ ՀՀ Վիճակագրական կոմիտեին և «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲ ընկերությանը որևէ գործողություն կատարելն արգելելը՝ ուղղված թիվ «ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ընկերության կողմից ներկայացված թիվ O.AB.100.12CIB.PIED.0.660.24 բանկային երաշխիքով ստանձնած պարտավորությունների կատարմանը՝ մինչև վերջնական եզրափակիչ դատական ակտի կայացումը, պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Արմինե Թումասյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am